326 Ով Տեր, Քու խոսքով մեզի ստեղծեցիր,

1. Ով Տեր, Քու խոսքով մեզի ստեղծեցիր,
Դուն հաստատեցիր երկինք ու երկիր:
Որչա՛փ կսիրեմ ես Քու օրենքդ,
Ան է ամեն օր իմ մտածմունքը:

2. Օրհնեցե՛ք Տերը, ո՛վ բոլոր ազգեր,
Գովե՛ք զԱնիկա, ո՛վ ժողովուրդներ:
Նեղությանս մեջ Տերը կանչեցի,
Անիկա պատասխան տվավ ինծի:

3. Լսե՛ք ասիկա, ո՛վ բոլոր ազգեր,
Ու ականջ դրե՛ք, ո՛վ ժողովուրդներ,
Աստված մեզի համար Փրկիչը ղրկեց,
Ան մեզի համար Իր կյանքը զոհեց:

4. Հիմա մոտեցե՛ք շնորհաց Աթոռին,
Կյանք պիտ ունենաք, թե հուսաք Գառին,
Ան է Փրկիչը համայն աշխարհի,
Ապաշխարեցե՛ք, կսպասե ձեզի: